Digitally signed by GASPARYAN LUSINE
7809730103
Date: 2022.09.20 11:12:26 AMST

# Թեմատիկ պլանավորում

**Հայոց լեզու 8-րդ դասարան**

**Շաբաթական 2 ժամ**

**Տարեկան 68 ժամ**

**Դասագրքի հեղինակներ՝** Հ.Բարսեղյան , Փ. Մեյթիխանյան 2017

| Թեմա | Նպատակ | Վերջնարդյունքներ |
|---|---|---|
| Բայ | ●բայի արտահայտած ընդհանուր իմաստը<br>●բայի դրսևորման ձևերը՝ դիմավոր և անդեմ<br>●լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտության ձևավորում | ● տեքստից դուրս գրել բայի դիմավոր և անդեմ ձևերը<br>● կազմել նախադասություններ՝ օգտագործելով բայի դիմավոր և անդեմ ձևերը<br>●տեքստում գտնել և դուրս գրել բայերը |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 2/1 | | Բայ: Բայըը որպես խոսքի մաս, նրա տեսակները և կազմությունը(կրկնություն) |
| 2/2 | | Բայի դիմավոր ձևերը |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| Մակբայ | ●ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների մշակում<br>●լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտության ձևավորում | ● խոսքի մեջ տարբերակել մակբայները մյուս չթեքվող խոսքի մասերից<br>● տեքստից դուրս գրել մակբայները, տարբերել դրանց տեսակները<br>●տրված մակբայյյններին օգտագործել նախադասություններում<br>● կարողանալ ճիշտ գրել ուղղագրական բարդություն ունեցող մակբայները<br>● տեքստում գտնել մակբայները, բանավոր կամ գրավոր նշել տեսակները |

| | | |
|---|---|---|
| | ● խոսքի մեջ մակբայների խոսքիմասային պատկանելության զարգացում<br><br>● ճանաչողական և ուղղագրական հմտությունների զարգացում | |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 5/1 | 14 | Մակբայը որպես խոսքի մաս |
| 5/2 | 16-17 | Տեղի և ժամանակի մակբայներ |
| 5/3 | 18 | Ձևի մակբայներ |
| 5/4 | 19 | Չափ ու քանակի մակբայներ |
| 5/5 | 20 | Ընդհանրական մակբայներ |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Կապ** | ●ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների մշակում<br>●լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտության ձևավորում<br><br>● կապերի կազմությունն ու ուղղագրությունը<br><br>● կապերի հոլովառության իմացություն | ● խոսքի մեջ տարբերակել կապերը մյուս չթեքվող խոսքի մասերից<br><br>● տեքստից դուրս գրել կապերը կապվող բառերի հետ միասին<br><br>●տրված նախադրություններով կազմել նախադասություններ<br><br>●տրված հետադրություններով կազմել նախադասություններ<br><br>● տարբերակել պարզ և բարդ կապերը<br><br>● տեքստում գտնել կապերը և կապվող բառերն ու բառակապակցությունները<br><br>● տեքստից դուրս գրել կապերը կապվող բառերի հետ միասին |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 2/1 | 40-42, 47-48 | Կապ: Կապը որպես խոսքի մաս, նրա տեսակները և կազմությունը |
| 2/2 | 44,47-48 | Կապերի հոլովառությունը,կազմությունը, ուղղագրությունն ու կետադրությունը |

| Թեմա | Նպատակ | Վերջնարդյունքներ |
|---|---|---|
| Շաղկապ | ● շաղկապի արտահայտած ընդհանուր իմաստի ընկալում<br>●այլ խոսքի մասերից շաղկապի ձևաբանական առանձնահատկություններ ի տարբերակում<br>●ընդհանուր գաղափար շաղկապի տեսակների և կազմության վերաբերյալ | ●Իմանալ շաղկապի արտահայտած ընդհանուր իմաստը /քերականական/, ձևաբանական առանձնահատկությունները<br>●տարբերակել շաղկապի տեսակները<br>●տեքստից գտնել շաղկապները և որոշել տեսակը<br>●ճիշտ կետադրել շաղկապներով կապակցվող նախադասությունները<br>●կազմել նախադասություններ շաղկապների կիրառությամբ |
| Ժամ | Էջ | Դաս |
| 2/1 | 51- 52 | Շաղկապը որպես խոսքի մաս: Շաղկապների տեսակները. համադասական և ստորադասական շաղկապներ: |
| 2/2 | 54 - 55 | Շաղկապների կազմությունը, ուղղագրությունը և կետադրությունը |
| Թեմա | Նպատակ | Վերջնարդյունքներ |

| | | |
|---|---|---|
| **Վերաբերական** | ●ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների մշակում<br>●լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտություն<br>● խոսքի մեջ վերաբերականների խոսքիմասային պատկանելության տարբերակում<br>● ճանաչողական և ուղղագրական հմտությունների զարգացում | ● խոսքի մեջ տարբերակել վերաբերականները մյուս չթեքվող խոսքի մասերից<br>● տեքստից դուրս գրել վերաբերականները, տարբերել տեսակները՝ ելնելով դրանց իմաստային նրբություններից<br>● վերաբերականները գործածել խոսքի մեջ<br>●կարողանալ ճիշտ գրել ուղղագրական բարդություն ունեցող վերաբերականները<br>● տեքստը հարստացնել վերաբերականներով՝ ըստ խոսողի արտահայտած վերաբերմունքի |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 3/1 | 24-25 | Վերաբերականը որպես խոսքի մաս |
| 3/2 | 26-28 | Վերաբերականների տեսակները |
| 3/3 | 30-31 | Վերաբերականների կազմությունը և կետադրությունը |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Ձայնարկություն** | ●ձայնարկության արտահայտած ընդհանուր իմաստը<br>●ձայնարկության տեսակները<br>●ձայնարկության ձևաբանական առանձնահատկություններ<br>●ձայնարկության շարահյուսական դերը | ●խոսքի մեջ տարբերակել զգացական վերաբերմունք արտահայտող բառերը և տարբերել վերաբերականներից<br>● տեքստից դուրս գրել ձայնարկությունները և դրանք կիրառել նախադասությունների մեջ<br>● տարբերակել զգացական, կոչական և նմանաձայնական ձայնարկությունները<br>●կետադրել ձայնարկությունները |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 2/1 | 35-37 | Ձայնարկություն. ձայնարկությունը որպես խոսքի մաս, նրա տեսակները |

| | | |
|---|---|---|
| 2/2 | 37-39 | Չայնարկությունների կազմությունը , ուղղագրությունը ու կետադրությունը |
| 1 | | **Թեմատիկ աշխատանք 1** |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Շարահյուսություն** | ●շարահյուսության ուսումնասիրության առարկան<br>●շարահյուսության դերը գրավոր և բանավոր խոսքում<br>●բառակապակցություն<br>● նախադասություն<br>●նախադասության բնութագրիչ հատկանիշները (ստորոգյալը, միտքը կամ բովանդակությունը, հնչերանգը)<br>●նախադասությունների կապակցման ձևերը(համադասություն և ստորադասություն) | ● տեքստից դուրս գրել բառակապակցությունները<br>●կազմել բառակապակցություններ<br>● տրված բառակապակցությունները գործածել նախադասությունների մեջ<br>● տրված բառերով կազմել նախադասություններ |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 2/1 | 60-61 | Շարահյություն. շարահյուսության ուսումնասիրության առարկան: Բառակապակցություն |
| 2/2 | 60-62 | Նախադասություն. նրան բնորոշ հատկանիշները |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Նախադասության տեսակներն ըստ** | ● լեզվի շարահյուսական կառուցվածքի ընկալում<br>●նախադասությունների | ● ճանաչել նախադասությունը որպես խոսքի միավոր<br>● կարողանալ կազմել կապակցված խոսք |

| | | |
|---|---|---|
| **հաղորդակցման նպատակի** | կազմում՝ ըստ տրված հատկանիշների (հարցական, պատմողական, բացականչական, հրամայական)<br><br>● կապակցված խոսքի կազմում տրված տեսակի նախադասություններով | ● կարողանալ պահպանել նախադասության հաղորդակցման տեսակների համապատասխան հնչերանգը<br>● ելնելով հաղորդակցական նպատակներից՝ ընտրել համապատասխան կառույցներ (նախադասության հաղորդակցման երանգներ) |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 5/1 | 64 | Պատմողական նախադասություն. տեսակները, ձևավորումը |
| 5/2 | 66 | Հարցական նախադասություն. տեսակները, ձևավորումը, կետադրությունը |
| 5/3 | 67 | Հրամայական նախադասություն. ձևավորումը, կետադրությունը |
| 5/4 | 68 | Բացականչական նախադասություն. հնչերանգը, կետադրությունը |
| 5/5 | 64-68 | Գիտելիքի ամրակայում. նախադասությունների տեսակներն ըստ հաղորդակցման նպատակների |
| 1 | | **Գործնական աշխատանք** |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Նախադասության տեսակներն ըստ կազմության** | ●պարզ նախադասություններիտեսակների, նրանց տեսակների ընկալում<br><br>●խոսքը համառոտելու և ընդարձակելու հմտությունների զարգացում<br><br>● պարզ նախադասությունների, | ● զարգացնել հաղորդակցական, ստեղծագործական և համագործակցային կարողությունները՝ կիրառելով պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասություններ<br>● ընկալել նախադասությունները ճիշտ տեղում ծավալելու և համառոտելու անհրաժեշտությունը |

| | | |
|---|---|---|
| | նրանց տեսակների ընկալում | |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 2/1 | 72 | Նախադասության տեսակները՝ պարզ և բարդ |
| 2/2 | 74 | Համառոտ և ընդարձակ նախադասություններ: Նախադասության ծավալումը և համառոտումը |
| 1 | | **Թեմատիկ փոխադրություն 2** |
| **Նախադասության գլխավոր անդամներ** | ●ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների մշակում<br>●լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտություն<br>● խոսքի մեջ նախադասության գլխավոր անդամների ճանաչում<br>●գլխավոր անդամների համաձայնության դրսևորումների իմացություն | ● խոսքի մեջ տարբերակել նախադասության գլխավոր անդամները մյուս անդամներից<br>● տեքստից դուրս գրել գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը<br>●տրված առանձին բառերն օգտագործել նախադասություններում որպես ենթակա և ստորոգյալ<br>●կարողանալ ճիշտ տարբերակել ենթական և նրա արտահայտությունը, ստորոգյալը և նրա տեսակները<br>●նախադասության մեջտարբերակել ենթակայի և ստորոգյալի համաձայնության դեպքերը |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 4/1 | 78-79 | Ենթակա |
| 4/2 | 80-82 | Պարզ ստորոգյալ |
| 4/3 | 83-84 | Բաղադրյալ ստորոգյալ |
| 4/4 | 78-84 | Թեմայի ամփոփում |
| 1 | | **Ամրակայող վարժ •** |
| 1 | | |
| 4/1 | 84-85 | Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը |

| | | |
|---|---|---|
| 4/2 | 86 | Ենթակայի և ստորոգյալի շարդասությունը |
| 4/3 | 84-86 | Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը: Թեմայի ամփոփում |
| 4/4 | | Գիտելիքի ամրակայում. ենթակայի և ստորոգյալի շարադասությունը |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Գոյականական անդամի լրացումներ** | -հարզալից վերաբերմունք դրսևորի մայրենի լեզվի հանդեպ, ճիշտ և գրագետ գործածի<br>-համագործակցի ընկերների հետ<br>-ճանաչի նախադասության գլխավոր և երկրորդական անդամները<br>-ստեղծի բանավոր ու գրավոր խոսք<br>-տրված բառերով կազմի բառակապակցություններ, պարզ նախադասություններ և կիրառի խոսքում | կարողանա՝<br>*ճիշտ կապակցել նախադասության անդամները:<br>* տրված տեքստում գտնել նախադասության գլխավոր և երկրորդական անդամները,որոշել տեսակը:<br>*տեքստում գտնել լրացումները և որոշել՝ նախադասության որ անդամին են լրացնում<br>*տրված բառերով կազմել բառակապակցություններ, պարզ նախադասություններ և կիրառել խոսքում: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | 93 – 94 | Գոյականական անդամի լրացում՝ որոշիչ |
| 2 | 94 -96 | Որոշչի և որոշյալի շարադասությունը և կետադրությունը |
| 3 | 97 – 98 | Հատկացուցիչ |
| 4 | 98 – 100 | Հատկացուցչի և հատկացյալի շարադասությունն ու կետադրությունը |
| 5 | 100 -101 | Բացահայտիչ, տեսակները, բուն |

| | | |
|---|---|---|
| | | բացահայտիչ |
| 6 | 101 – 102 | Բացահայտչի և բացահայտյալի շարադասությունն ու կետադրությունը |
| 7 | 102 – 104 | Մասնական բացահայտիչ. կետադրությունը |
| 8 | | Ամփոփում |
| 1 | | **Թեմատիկ հարցաշար 3** |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Բայական անդամի լրացումներ** | . ճանաչել տալ բայական անդամի լրացումները<br>. Ճանաչել տալ ուղիղ և անուղղակի խնդիրները<br>.ներկայացնել խնդիրների կազմման առանձնահատկություն-ները<br>. ընկալել տալ ուղիղ խնդրի շարահյուսական դերը, այն տարբերակել ենթակայից | - կարողանալ տարբերակել անջատման խնդիրը բացառական հոլովով դրված այլ անդամներից<br>- ուղիղ խնդիրը տարբերակել ենթակայից<br>-առանձնացնել խնդիրներին բնորոշ առանձնահատկությունները |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 1 | 105, 106 | Խնդիրներ և պարագաներ |
| 2 | 106, 107 | Ուղիղ խնդիր |
| 3 | 107, 108 | Ներգործող խնդիր |
| 4 | 109 | Հանգման խնդիր |
| 5 | 110 | Միջոցի խնդիր |
| 6 | 111 | Անջատման խնդիր |
| 7 | 112 | Միասնության խնդիր |
| 8 | 113 | Վերաբերության խնդիր |
| 9 | 114 | Ամփոփում |
| 1 | | **Գործնական աշխատանք** |
| 10 | 116, 118 | Պարագաներ, տեղի պարագա |
| 11 | 119 | Ժամանակի պարագա |
| 12 | 121 | Ձևի պարագա |
| 13 | 122 | Պատճառի պարագա |

| | | |
|---|---|---|
| 14 | 123 | Պայմանի պարագա |
| 15 | 124 | Նպատակի պարագա |
| 16 | 124 | Չափ ու քանակի պարագա |
| 1 | | **Թեմատիկ աշխատանք 4** |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Գործնական գրություններ** | . գործնական գրությունների տեսակների տարբերակում | .կարողանալ կազմել գործնական գրություններ |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | 133 | Բնութագիր |
| 1 | 134 | Ինքնակենսագրություն |
| 1 | 135 | Ստացական |
| 1 | | **Կրկ • վարժ •** |
| 1 | | **Ամփոփիչ կրկնություն** |

## Դաս 1 – Բայ: Բայը որպես խոսքի մաս, նրա տեսակները և կազմությունը

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

**1.Ի՞նչ են ցույց տալիս բայերը:**

□առարկա  □ գործողություն , եղելություն 

**2.Քանի՞ դեմքունիբայը:** 

□ երեք □ երկու □ մեկ

**3. Ո՞ր բառն է բայ:**

□ զբոսնել □ նկար □ գեղեցիկ






**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. բայերը ցույց են տալիս գործողություն եղելություն,

2. բայն ունի երեք դեմք,

3. զբոսնելը բայ է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տարբերակել բայերը մյուս խոսքի մասերից,

2. ճանաչել և տեքստից դուրս գրել բայերը,

3. տարբերակել դիմավոր և անդեմ բայերը:

Դաս 2- Բայի դիմավոր ձևերը

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1.Բայի դիմավոր  ձևերը նախադասության մեջ լինում են.





☐ ենթակա ☐ ստորոգյալ

**2.Դիմավոր բայերը ո՞ր ժամանակով են դրված. / միացրու՛ գծերով /**

| | |
|---|---|
| խոսում  եմ | անցյալ |
| կխոսեմ | ապառնի |
| խոսել եմ | ներկա |

**3. Տրվածներից  ո՞րը բայի եղանակներից չէ.**

| | | |
|---|---|---|
| սահմանական | անորոշ | ենթադրական |
| հրամայական | ըղձական | հարկադրական |

Հիշեցում՝ դերբայներ 

անորոշ, ենթակայական

հարակատար, համակատար

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .**

1. Դիմավոր բայերը նախադասության մեջ կատարում են ստորոգյալի պաշտոն:

2. Բայն ունի 3 ժամանակ՝ ներկա , անցյալ ապառնի:

3. Անորոշը բայի եղանակներից չէ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1.նախադասության մեջ գտնել ստորոգյալը,

2.որոշել բայի ժամանակները,

3.հուշումից հասկանալ, որ անորոշ դերբայը բայի եղանակներից չէ.ճանաչել բայի եղանակները:

**Դաս 3- Մակբայը որպես խոսքի մաս**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ի՞նչ են կոչվում գործողության տեղ, ձև, ժամանակ, չափ ու քանակ ցույց տվող բառերը:



մակբայներ ☐ վերաբերականներ ☐

2. Մակբայները կարո՞ղ են թեքվել.

Այո ☐ Ոչ ☐

3. Քանի՞ տեսակ են լինում մակբայները

_______________, _______________, ____________________, ______________________

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1 Գործողության տեղ, ձև, ժամանակ, չափ ու քանակ ցույց տվող բառերը կոչվում են մակբայներ:

2. Մակբայը չթեքվող խոսքի մաս է:

3. Լինում են տեղի, ձևի, ժամանակի, չափ ու քանակի:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տերբերակել գործողության տեղ, ձև, ժամանակ, չափ ու քանակ ցույց տվող բառերը

2. տարբերակել մակբայները մյուս չթեքվող խոսքի մասերից

3. մտապահել տեղ, ձև, ժամանակ, չափ ու քանակ ցույց տվող խոսքի մասը:

Դաս 4 - Տեղի և ժամանակի մակբայներ

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ի՞նչ են ցույց տալիս տեղի մակբայները



ժամանակ ☐  տեղ ☐

**2.** Ի՞նչ հարցերի են պատասխանում տեղի մակբայները:

__________ , ____________________

**3.** Նշվածներից որո՞նք են ***ժամանակի***(**ե՞րբ** )մակբայներ , որո՞նք ***տեղի***(**որտե՞ղ, ո՞ւր**) մակբայներ:

Դեմ դիմաց, դռնեդուռ, տեղ-տեղ, օրըստօրե, շուտով, առայժմ, երկրեերկիր, հեռու, վերջերս, վաղօրոք

Տեղի (**որտե՞ղ, ո՞ւր**)մակբայներ ________________________________________

______________________________________________________________________________

Ժամանակի (**ե՞րբ**)մակբայները ________________________________________

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Տեղի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման տեղ:

2. Տեղի մակբայները պատասխանում են որտե՞ղ, ո՞ւր հարցերին:

3.Նշվածներից տեղի մակբայներ են **դեմ դիմաց, դռնեդուռ, տեղ-տեղ, երկրեերկիր, հեռու**, ժամանակի մակբայներ են **օրըստօրե, շուտով առայժմ, վերջերս, վաղօրոք**:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. ընտրել և նշել ճիշտ տարբերակը,

2. հիշել մակբայներին տրվող հարցերը,

3. հարցերի օգնությամբ առանձնացնել և գրի առնել տեղի և ժամանակի մակբայները:

Թեմատիկ պլանավորում

**Դաս 5 – Ձևի մակբայներ**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ի՞նչ են ցույց տալիս ձևի մակբայները, ի՞նչ հարցի են պատասխանում:



Որտե՞ղ ☐ ժամանակ

Ինչպե՞ս ☐ ձև

2. Ի՞նչ են դառնում նախադասության մեջ ձևի մակբայները:

**ձևի մակբայ** ☐ **ձևի պարագա** ☐

3. Նշվածներից որո՞նք են ***ձևի*** մակբայներ:

արագ, դռնեդուռ, բարեկամաբար, օրըստօրե, մեն-մենակ, դանդաղորեն, վերջերս

_______________, _______________________, _____________________, ________________

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ձևի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ձևը, պատասխանում են ինչպե՞ս հարցին:

2. Ձևի մակբայները նախադասության մեջ դառնում են ձևի պարագաներ:

3. Նշվածներից ձևի մակբայներ են **արագ, բարեկամաբար, մեն-մենակ, դանդաղորեն**:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. ընտրել և նշել ճիշտ տարբերակները,

2. հիշել մակբայների դերը նախադասության մեջ,

3. առանձնացնել և գրի առնել ձևի մակբայները:

[Թեմատիկ պլանավորում]

**Դաս 6– Չափ ու քանակի մակբայներ**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ի՞նչ են ցույց տալիս չափ ու քանակի մակբայները, ի՞նչ հարցի են պատասխանում:



______________________ ________________________

1. Կա՞ն չափ ու քանակի մակբայներին **հարաբերակից** դերանուններ:

☐ **այո** ☐ **ոչ**




2. Հետևյալ նախադասություններում որո՞նք են չափի մակբայներ:

Պատվիրատուն *բազմիցս* դիմել էր շինարարներին:

Արմենը *չափազանց* արագ է խոսում:

______________________, ________________________

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Չափ ու քանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման չափը, պատասխանում են ինչքա՞ն, որքա՞ն հարցերին:

2. Կան չափ ու քանակի մակբայներին հարաբերակից դերանուններ:

3. Այս նախադասություններում չափի մակբայներ են *բազմիցս, չափազանց*:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. ընտրել և նշել ճիշտ տարբերակները,

2. հիշել մակբայների և հարաբերակից դերանունների մասին,

3. նախադասություններից դուրս գրել չափ ու քանակի մակբայները:

[Թեմատիկ պլանավորում]

**Դաս 7 – Կապ: Կապը որպես խոսքի մաս, նրա տեսակները և կազմությունը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

**1.**Ի՞նչ իմաստ են արտահայտում կապերը:

**Քերականական, թե՞ նյութական**



_______________________________________________

2. Քանի՞ տեսակ են լինում կապերը:

ա/ հատուկ և հասարակ

բ/ նախադրություններ, ետադրություններ



| | |
|---|---|
| հանուն հայրենիքի | տոնի առթիվ |
| առանց քեզ | շենքերի միջև |
| հանձին ընկերոջ | սեղանի մոտ |

3. Քանի՞ տեսակ են լինում կապերն ըստ կազմության:



- պարզ և բարդ
- պարզ և ածանցավոր
- բարդ և ածանցավոր

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Կապերն արտահայտում են քերականական իմաստ:

2. Կապերը լինում են երկու տեսակ՝ նախադրություններ և հետադրություններ,

3.Կապերն ըստ կազմության լինում են պարզ և բարդ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. ընտրել և գրել ճիշտ պատասխանը,

2. օգտվելով հուշումից՝ տարբերակել կապերի տեսակները,

3. նկատել հուշումը և ընտրել ճիշտ պատասխանը։

Թեմատիկ պլանավորում

**Դաս 8 - Շաղկապը որպես խոսքի մաս: Շաղկապների տեսակները. համադասական և ստորադասական շաղկապներ:**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**



**1.**Ի՞նչ իմաստ են արտահայտում շաղկապները.

ա/ քերականական ☐ բ/ վերաբերմունքային ☐

2. Քանի՞ տեսակ են լինում շաղկապերը.

ա/ համադասական, ստորադասական ☐

բ/ անձնանիշ, իրանիշ ☐




3. Ստորադասական շաղկապները կապում են իրար գերադաս և ստորադաս նախադասություններ, իսկ ի՞նչ են իրար կապում **համադասական շաղկապները**



ա/ ենթականեր և ստորոգյալներ ☐

բ/ համազոր անդամներ և համազոր, համադաս նախադասություններ ☐

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Շաղապներն արտահայտում են քերականական իմաստ:

2. Շաղապները լինում են երկու տեսակ՝ համադասական և ստորադասական:

3. Համադասական շաղկապներն իրար են միացնում համազոր անդամներ և համազոր, համադաս նախադասություններ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. գտնել ճիշտ տարբերակը,

2. հուշող պատկերների օգնությամբ վերհիշել շաղկապների տեսակները,

3. գտնել ճիշտ տարբերակը:

Թեմատիկ պլանավորում

**Դաս 9 – Շաղկապների կազմությունը, ուղղագրությունը և կետադրությունը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1.Քանի՞ տեսակ են լինում շաղկապերն ըստ կազմության: 

●պարզ և ածանցավոր

●բարդ և ածանցավոր

●պարզ, բարդ և ածանցավոր 



2. Ո՞ր հատկանիշն է սխալ գրված: *Գտի՛ր սխալը և ընդգծի՛ր:*

Բարդ շաղկապները գրվում եմ կա՛մ միասին , կա՛մ անջատ, կա՛մ գծիկով:

3.Ո՞ր նախադասությունն է սխալ կետադրված.



●Կկորչեինք, եթե ճամփին չբոցկլտար հայոցլեզուն:

●Աղվեսը եկավ և հանդեսի ժամանակ բազմության մեջ առյուծին նախատեց բարձրաձայն ու անարգեց:

●Ես սիրում եմ սպիտակ,և կարմիր վարդեր: 

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Շաղկապները կազմությամբ լինում են **պարզ, բարդ և ածանցավոր**:

2.Բարդ շաղկապները գրվում են կա՛մ միասին, կա՛մ անջատ :

3. Եվ շաղկապի դիմաց ստորակետ դրվում է, եթե փոխվել է նախադասության ենթական:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տարբերակել պարզ և բարդ շաղկապները,

2 . ժպիտիկի օգնությամբ տեսնել հուշող պատասխանը,

3. հուշող նկարներից և սլաքից օգտվելով՝ գտնել պատասխանը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 10-Վերաբերականը որպես խոսքի մաս

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ո՞ր տեսակի խոսքի մասերին են պատկանում վերաբերականները



նյութական ☐ քերականական ☐

2. Վերաբերականները արտահայտում են խոսողի վերաբերմու՞նքը, թե՞ ցույց են տալիս գործողության տեղը, ժամանակը, ձևը, չափն ու քանակը:

3. Վերաբերականները նախադասության աղամ դառնու՞մ են, թե՞ չեն թեքվում և չեն դառնում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Վերաբերականները քերականական տեսակի խոսքի մաս են:

2. Վերաբերականները արտահայտում են խոսողի վերաբերմունքը:

3. Վերաբերականները չթեքվող խոսքի մաս են և նախադասության անդամ չեն դառնում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տարբերակել քերականական իմաստ ունեցող խոսքի մասերը

2. զանազանել վերաբերականները որպես խոսողի վերաբերմունք արտահայտող խոսքի մաս

3. իմանա վերաբերականնների՝ քերականական խոսքի մաս լինելը և նախադասության անդամ չդառնալը:

Թեմատիկ պլանավորում

**Դաս 11 – Վերաբերականների տեսակները**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Հաստատական վերաբերականներն արտահայտում են խոսողի

☐ հաստատակա՞ն, թե՞ ժխտողական վերաբերմունքը ☐



անշուշտ

ոչ

**2.** Ո՞ր շարքի վերաբերականներն են սաստկական

1) ա. մի՞թե

բ. ասես

գ. կարծես թե

2) ա. նույնիսկ

բ. մանավանդ

գ. մինչև անգամ

**3.** Ո՞ր վերաբերականը տեղադրել նախադասության մեջ, որ արտահայտի սահմանափակման վերաբերմունք

երևի, անշուշտ, միայն, բնականաբար, հավանաբար

....... նա կարող էր օգնել իր ընկերներին:

---

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Հաստատական վերաբերականները արտահայտում են խոսողի հաստատական վերաբերմունքը:

2. Սաստկական են 2-րդ շարքի վերաբերականները:

3. Միայն վերաբերականը. ***Միայն* նա կարող էր օգնել իր ընկերներին:**

---

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տարբերակել վերաբերականների տեսակները,

2. առանձնացնել սաստկական վերաբերականների տեսակները,

3. բառի իմաստից ելնելով՝ առանձնացնել սահմանափակման վերաբերականը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 12– Ձայնարկություն: Ձայնարկությունը որպես խոսքի մաս, նրա տեսակները

https://youtu.be/xdhA8icK8zQ-- Բնության ձայներ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Ի՞նչ իմաստ են արտահայտում ձայնարկությունները.

□նյութական□քերականական □վերաբերմունքային

2.Քանի՞ տեսակ են լինում ձայնարկությունները .




□երեք □ երկու □ մեկ

3. Ո՞ր բառն է ձայնարկություն.



□երնի □ուխա՜յ □Արշա՛կ

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ձայնարկությունները արտահայտում են վերաբերմունքային իմաստ:

2. Ձայնարկությունները լինում են 3 տեսակ՝ զգացական, կոչական, նմանաձայնական:

3. Ուխա՜յ- ը ձայնարկություն է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. խոսքի մեջ տարբերակել ձայնարկությունները վերաբերականներից,

2. տարբերակել ձայնարկությունների տեսակները,

3. հասկանալով նկարի օգնությունը՝ գտնել ճիշտ տարբերակը:

[Թեմատիկ պլանավորում]

**Դաս 13 - Ձայնարկությունների կազմությունը, ուղղագրությունը ու կետադրությունը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ինչպե՞ս են արձագաքում պատկերված կենդանիները: Գրի՛ր նրանց արձակած ձայները և կետադրի՛ր

1.  2.  3.  4. 

1. ____________________ 2. _________________ 3.________________ 4.__________________

**2. Ձայնարկությունները նախադասության անդամ**



□ լինում են □ չեն լինում

**3. Տրված նախադասության մեջ ո՞ր բառն է ձայնարկություն.**



_Փի՛շտ – փի՛շտ,- վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը, սուր ծղրտալով ընկավ կատվի ետևից:

____________________________

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .**

1. Աքլորի, շան, մեղվի, կատվի արձակած ձայները ձայնարկություններ են:

2. Ձայնարկությունները նախադասության անդամ չեն դառնում:

3. *Փի՛շտ – փի՛շտ*-ը ձայնարկություն է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. հիշել և գրի առնել կենդանիների արձակած ձայնարկությունները,

2. վերհիշել ձայնարկությունների առանձնահատկությունները,

3. նախադասությունից դուրս գրել ձայնարկությունները:

Դաս 14 – Շարահյուսություն . շարահյուսության ուսումնասիրության առարկան: Բառակապակցություն

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:



1.Ինչպե՞ս տրված բառերը կդարձնես բառակապակցություններ: Գրի՛ր տողերի վրա.

1. Ազնիվ , լայն, սուր , նկարազարդ

2. մկրատ , գիրք , տղա, միջանցք

_______________________________ _______________________________

_______________________________ _______________________________

2.Ի՞նչ բառակապակցություններ կարող ես կազմել նկարների շուրջ :

1.  2.  3.  4. 

1.___________________________________ 3.___________________________________

2.___________________________________ 4.___________________________________

3. Փուչիկներից ընտրի՛ր մեկը , որը հորդ բառի հետ կկազմի բառակապակցություն.




հորդ ________________________________________

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Ազնիվ տղա, լայն միջանցք, սուրմկրատ, նկարազարդ գիրք արտահայտությունները բառակապակցություններ են:

2. Տրված պատկերներով կարելի է կազմել, օրինակ՝ *սուր մկրատ, գեղեցիկ վարդ, ջերմ մայրիկ, տխուր արջուկ* բառակապակցություններ:

3. **Հորդ** բառը բառակապակցություն կկազմի **անձրև** բառի հետ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

**Շարահյուսություն**

**(ուսումնասիրության առարկան)**

**բառակապակցություն** **նախադասություն**

**բառակապակցություն**

- երկու և ավելի բառերի կապակցություն է
- ունի անվանողական արժեք

**նախադասություն**

- բառերի կապակցություն է, որն արտահայտում է ամբողջական միտք
- ունի հաղորդակցական արժեք

1. հատվածից դուրս գրել բառակապակցություններ,

2. տրված բառերով կազմել բառակապակցություններ,

3. ընտրել բառը, որով ճիշտ բառակապակցություն կստացվի:

**Դաս 15-Նախադասություն. նրան բնորոշ հատկանիշները**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

**1.Նկարների շուրջ կազմիր նախադասություններ .**

**1.**  . **2.** 

1.____________________________________________________________

2.____________________________________________________________

**2.Գծերով միացրո՛ւ նախադասության սկիզբը և վերջը.**



Խոսում եմուսուցչուհուն:

Խաղում էրհայերեն:

Մոտեցավընկերոջ հետ:

**3.Փակագծերից ընտրի՛ր բաց թողնված բառը և ստացի՛ր նախադասություն.**

1. Լավ է գիտունին գերի, քան ____________________ սիրելի:

2. Մազը երկար, խելքը՝ ____________________:

3. Շատի հետևից վազողը ____________________ էլ կզրկվի:

(քչից, անգետին,կարճ ) 

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .**

1. Պատկերներով կարելի է կազմել, օրինակ՝ ***Երեխաները գնում են դպրոց: Հեռվում փողփողում է հայկական դրոշը***նախադասությունները:

2. **Խոսում եմհայերեն: Խաղում էրընկերոջ հետ:Մոտեցավուսուցչուհուն**բառազույգերը նախադասություններ են:

3.Լավ է գիտունին գերի, քան անգետին սիրելի:

Մազը երկար, խելքը՝ կարճ:

Շատի հետևից վազողը քչից էլ կզրկվի:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. կազմել նախադասություններ՝ օգտվելով տրված նկարներից,

2. տրված բառակապակցությունները գործածել նախադասությունների մեջ,

3. գտնել իմաստով համապատասխան բառը և տեղադրել նախադասության մեջ:

**Դաս 16- Պատմողական նախադասություն. տեսակները, ձևավորումը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ըստ հաղորդակցման նպատակի կամ երանգի՝ քանի՞ տեսակ են լինում նախադասությունները:

ա/ 6 բ/ 2 գ/ 4 դ/ 3



Պատմողական,հարցական

Բացականչական, հրամայական

2. Ի՞նչ է արտահայտում պատմողական նախադասությունը՝
   ▢ **դատողությո՞ւն,** թե՞ **հարցում** ▢

3. Տրված բառախմբով կարո՞ղ ես ստանալ պատմողական նախադասություն և դարձնել ժխտական.

Սասունն է, հայրենիքը,քարոտ, Նրա

**Պատմողական՝**

__________________________________________________

**Ժխտական՝**

__________________________________________________

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1.Ըստ հաղորդակցման նպատակի կամ երանգի նախադասությունները լինում են 4 տեսակ:

2. Պատմողական նախադասությունն արտահայտում է դատողություն:

3. **Նրա հայրենիքը քարոտ Սասունն է: Նրա հայրենիքը քարոտ Սասունը չէ:**

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. հիշել (կամ ներքևում գրվածից իմանալ) և նշել ճիշտ տարբերակը,

2. տարբերակել նախադասության արտահայտած դատողությունը հարցումից,

3. կազմել նախադասություններ՝ օգտվելով տրված բառախմբից:

[Թեմատիկ պլանավորում](#)

**Դաս 17 - Հարցական նախադասություն. տեսակները, ձևավորումը, կետադրությունը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ի՞նչ չեն արտահայտում հարցական նախադասությունները.



- Բուն հարցում ▢
- Հարցում-հաստատում ▢
- Ճարտասանական կամ անպատասխան հարցում ▢
- Հրաման, հորդոր, խնդրանք ▢

2. Տրված նախադասություններից ո՞րն է հարցական նախադասություն.

- **Սահակը Արմենին հարցնում էր, թե նա ինչ է իրենից պահանջում:**
- **Ի՞նչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի:**



3. Ինչի՞ միջոցով են ձևավորվում հարցական նախադասությունները.

▢ հարցական հնչերանգի, **թե՞** բացականչական հնչերանգի ▢

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Հարցաան նախադաuոթյունները ***չեն արտահայտում*** հրաման, հորդոր, խնդրանք:

2. *Ի՞նչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի* նախադասությունը հարցական նախադասություն է:

3. Հարցական նախադասությունները ձևավորվում են հարցական հնչերանգի միջոցով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. ընտրել և նշել ճիշտ տարբերակը,

2. նշել ճիշտ պատասխանը,

3. մտապահել հարցում արտահայտող նախադասությունների՝ **հնչերանգով** ձևավորվելու մասին:

[Թեմատիկ պլանավորում]

**Դաս 18 – Հրամայական նախադասություն. ձևավորումը, կետադրությունը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

4. Ի՞նչ կետադրություն են ունենում հրամայական նախադասությունները, ի՞նչ են արտահայտում:



☐ Հրաման արտահայտող բառը շեշտ է ստանում

☐ Բութ է ստանում

☐ Հրաման, հորդոր

☐ Բուն հարցում

5. Ինչպե՞ս են կազմվում հրամայական նախադասության ժխտական ձևերը:

☐ **մի՞թե** բառի օնությամբ, թե՞ **մի '** արգելական բառի ☐

6. Ո՞ր բառը կտեղադրես նախադասության մեջ, որ ստացվի արգելական հրամայական:

— Լիլիթ, այդպես լուռ ու տխուր ________ նայիր ինձ:

Հանգիստ, **մի'**, վատ, գեղեցիկ, երկար

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Հրամայական նախադասություններում հրաման արտահայտող բառը շեշտ է ստանում: Հրամայական նախադասություններն արտահայտում են հրաման, հորդոր:

2. Հրամայական նախադասության ժխտական ձևերը կազմվում են ***մի***' արգեականն բառի օգնությամբ:

3. — **Լիլիթ, այդպես լուռ ու տխուր *մի* նայիր ինձ:** (արգելական հրամայական)

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. ընտրել և նշել ճիշտ տարբերակները,

2. հիշել արգելական րամայականի կազմությունը,

3. առանձնացնել և նախադասության մեջ տեղադրել համապատասխան բառը:

**Դաս 19– Բացականչական նախադասություն. հնչերանգը, կետադրությունը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ի՞նչ ***չեն*** արտահայտում բացականչական նախադասությունները.

- ☐ Հույզ, զգացմունք
- ☐ Հրաման
- ☐ Զարմանք, հիացմունք, կոչ, ափսոսանք



2. Ինչպե՞ս են ձևավորվում բացականչական նախադասությունները:

- ☐ Հարցական հնչերանգով և հարցական նշանով
- ☐ Բացականչական հնչերանգով և բացականչական նշանով

3. Ո՞ր նախադասությունն է բացականչական:

**ա/ Ա՜նց կացան…**

**Օրերս թռան, ա՜նց կացան…** ☐

**բ/ Ո՞ւր էիր երեկ ամբողջ օրը:** ☐

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Բացկանչական նախադասությունները ***չեն*** արտահայտում ***հրաման***:

2. Բացականչական նախադասությունները ձևավորվում են բացականչական հնչերանգով և բացականչական նշանով:

3. **Ա՜նց կացան….**
**Օրերս թռան, ա՜նց կացան…** նախադասությունը բացականչական նախադասություն է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. ընտրել և նշել ճիշտ տարբերակը,

2. հիշել բացականաչան հնչերանգի մասին,

3. արտահայտիչ կարդալ և նշել ճիշտ տարբրակը:

**Դաս 20-Նախադասության տեսակները՝ պարզև բարդ**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

4. Ըստ կազմության քանի՞ տեսակ են լինում նախադասությունները.



ա/ պարզ, բարդ, անանցավոր ☐  բ/ պարզ և բարդ ☐

5. Ի՞նչ է կոչվում մեկ ստորոգյալ ունեցող նախադասությունը:

_______________________________

Այս ու այն սարալանջից լսվում էր հորովելի ձայնը:

6. Քանի՞ ստորոգյալ պետք է ունենա բարդ նախադասությունը.

ա/ մեկից ավելի ☐  բ/ ընդամենը մեկ ☐

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ըստ կազմության նախադասությունները լինում են պարզ և բարդ:

2. Միայն մեկ ստորոգյալ ունեցող նախադասությունը կոչվում է պարզ նախադասություն:

3. Բարդ նախադասությունը կազմված է մեկից ավելի պարզ նախադասություններից:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. գտնել և ընտրել ճիշտ տարբերակը,

2. տրված օրինակին նայելով՝ հասկանալ հարցի պատասխանը,

3. մտապահել անցած թեմայի հիմնական ասելիքը:

[Թեմատիկ պլանավորում]

**Դաս 21–Համառոտ և ընդարձակ նախադասություններ: Նախադասության ծավալումը և համառոտումը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**



1. Քանի՞ տեսակ է լինում պարզ նախադասությունը:

ա/ **պարզ համառոտ, պարզ ընդարձակ** ▢

բ/**բարդ համադասական, բարդ ստորադասական** ▢

2. Ի՞նչ է կոչվում միայն ենթակայից և ստորոգյալից կազմված նախադասությունը:

3. Պարզ ընդարձակ նխադասությունը ի՞նչ անդամներից է կազմված:

ա/ ենթակայից, ստորոգյալից, լրացումներից     բ/բարդ բառերից

7. Կարելի՞ է արդյոք համառոտ նախադասությունը ընդարձակել, ընդարձակ նախադասությունը համառոտել:

**Այն** ⟵ ▢     **Ոչ** ⟵ ▢

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Պարզ նախադասությունները լինում են երկու տեսակ՝ պարզ համառոտ, պարզ ընդարձակ:

2. Միայն ենթակայից և ստորոգյալից կազմված նախադասությունը կոչվում է պարզ համառոտ նախադասություն:

3. Պարզ ընդարձակ նախադասությունը կազմված է ենթակայից, ստորոգյալից, լրացումներից:

4. Այո', կարելի է ընդարձակ նախադասությունը համառոտել, համառոտ նախադասությունը ծավալել:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. հիշել նախադասության տեսակները,

2. տարբերակել պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասությունները,

3. ընկալել պարզ նախադասությունների տարբերությունները,

4. զարգացնել թեմայի մասին ունեցած գիտելիքը:

**Դաս 22-Նախադասության գլխավոր անդամներ.ենթակա**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

**8.** Ենթական նախադասության գլխավո՞ր, թե՞ երկրորդական անդամ է.



գլխավոր ☐ երկրորդական ☐

2. Ենթական գործողություն կատարո՞ղն է, թե՞ առարկայի կատարած գործողությունը:

3. Ո՞ր հոլովով է դրվում ենթական:

- Ուղղական
- Սեռական
- Տրական

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ենթական նախադասության գլխավոր անդամ է:

2. Ենթական գործողություն կատարողն է:

3.Ենթական դրվում է ուղղական հոլովով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տարբերակել նախադասության գլխավոր անդամ ենթական,

2. առանձնացնել ենթական որպես գործողություն կատարող առարկա,

3. հիշել ենթակայի հոլովը:

**Դաս 23 –Պարզ ստորոգյալ**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1.Ստորոգյալը գլխավո՞ր, թե՞ երկրորդական անդամ է.



գլխավոր

երկրորդական

2. Ի՞նչ է ցույց է տալիս պարզ ստորոգյալը.

ա. ենթակայի գործողություն                    բ. առարկայի հատկանիշ:

3. Պարզ ստորոգյալն արտահայտվո՞ւմ է բայի դիմավոր ձևերով:

**Այո** ⟵ ☐          **Ոչ** ⟵ ☐

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ստորոգյալը նախադասության գլխավոր անդամ է:

2.Պարզ ստորոգյալը ցույց է տալիս ենթակայի գործողություն:

3. Պարզ ստորոգյալը արտահայտվում է բայի դիմավոր ձևերով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տարբերակել նախադասության գլխավոր անդամ ստորոգյալը,

2. առանձնացնել ստորոգյալը որպես ենթակայի գործողություն,

3. տարբերակել պարզ ստորոգյալները՝ որպես դիմավոր բայի արտահայտություն:

Թեմատիկ պլանավորում

**Դաս24–Բաղադրյալ ստորոգյալ**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։**

1. Բաղադրյալ ստորոգյալն արտահայտվում է.

   ա/ բայի դիմավոր ձևերո՞վ ☐ բ/ որևէ խոսքի մասով և հանգույցով ☐

Օրինակ՝






2. Հարադիր բայերը խոնարհվելիս պա՞րզ, թե՞ բաղադրյալ ստորոգյալ են դառնում։

միտք արեց, վեր է կենում,
խոսք է ասելու, պար էր
գալիս, ձեռք կբերի

3. Պարզ ստորոգյալի կազմում է-ն կոչվում է օժանդակ բայ, իսկ ի՞նչ է կոչվում է-ն բաղադրյալ ստորոգյալի կազմում։

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Բաղադրյալ ստորոգյալը արտահայտվում է որևէ խոսքի մասով և հանգույցով։

2. Հարադիր բայերը խոնարհվելիս դառնում են պարզ ստորոգյալ։

3. Բաղադրյալ ստորոգյալի կազմում է-ն կոչվում է***հանգույց***։

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. իմանալ բաղադրյալ ստորոգյալի արտահայտությունը,

2. տարբերակել հարադիր բայերը որպես պարզ ստորոգյալ,

3. առանձնացնել բաղադրյալ ստորոգյալի մասերը։

**Դաս 25–Թեմայի ամփոփում**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ենթական պատասխանում է ո՞վ, ովքե՞ր, թե՞ ե՞րբ, ինչպիսի՞ հարցերին:

ո՞վ, ովքե՞ր

ե՞րբ, ինչպիսի՞

2. Հետևյալ նախադասության մեջ գտնել և ընդգծել պարզ ստորոգյալը:

Ես **լսում եմ** լավ երաժշտություն

3. Խելացի բառը է հանգույցի ներկա ժամանակով գործածել որպես բաղադրյալ ստորոգյալ:

Արմենը (ի՞նչ է) ——————————

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ենթական պատասխանում է ո՞վ, ովքե՞ր հարցերին:

2. Պարզ ստորոգյալը լսում եմ դիմավոր բայն է:

3. է հանգույցի ներկա ժամանակով բաղադրյալ ստորոգյալն է **խելացի է:**

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. իմանալ ենթակային տրվող հարցերը,

2. տարբերակել լսում եմ բայը որպես պարզ ստորոգյալ,

3. կազմել բաղադրյալ ստորոգյալով նախադասություն:

Թեմատիկ պլանավորում

**Դաս 26-Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

2. Ո՞րն է ճիշտ տարբերակը**Ես** ենթակայի համար.



I դեմքի եզակի ստորոգյալ գրեցի ☐

II դեմքի եզակի ստորոգյալ գրեցիր ☐

**2.** Ո՞րն է ճիշտ տարբերակը**Դու** ենթակայի համար.



I դեմքի հոգնակի ստորոգյալ գրեցինք ☐

II դեմքի եզակի ստորոգյալ գրեցիր ☐

**3.** Ո՞րն է ճիշտ տարբերակը**Տղան** ենթակայի համար.



I դեմքի հոգնակի ստորոգյալ գրեցինք ☐

III դեմքի եզակի ստորոգյալ գրեց ☐

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. I դեմքի եզակի թվով դրված ենթական (Ես) նախադասության մեջ կհամաձանի I դեմքի եզակի թվով ստորոգյալի հետ:

2. II դեմքի եզակի թվով դրված ենթական (Դու) նախադասության մեջ կհամաձանի II դեմքի եզակի թվով դրված ստորոգյալի հետ:

3. III դեմքի եզակի թվով դրված ենթական (Տղան) նախադասության մեջ կհամաձանի III դեմքի եզակի թվով ստորոգյալի հետ :

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. ընտրել ճիշտ պատասխանը,

2. համապատասխանեցնել ենթակայի դեմքն ու թիվը ստորոգյալի դեմքի ու թվի հետ,

3. հիշել ենթակայի և ստորոգյալի համաձայնության կանոնները:

Թեմատիկ պլանավորում

**Դաս 27–Ենթակայի և ստորոգյալի համաձայնության առանձնահատկությունները**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Համաձայնության ո՞ր գործածությունն է ավելի ճիշտ հետևյալ օրինակներում.

Դասարանի կեսը բացակա է: ☐

Դասարանի կեսը բացակա են: ☐

2. Հետևյալ նախադասության մեջ **զիտե՞ս, թե՞ զիտեք** ձևն ճիշտ:

Դու և նա ...... ճշմարտությունը

3. Ստորոգյալի ո՞ր տարբերակն է ճիշտ հետևյալ նախադասության մեջ

Վարդը, մանուշակը և մեխակը (կծաղկի), (կծաղկեն) շուտով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ենթական և ստորոգյալը համաձայնում են դեմքով և թվով:

2. Ենթակաների՝ տարբեր դեմքերով լինելու դեպքում ստորոգյալը համաձայնում է դիմային գերադասություն ունեցող անդամին:

3. Բազմակի ենթակաների հետ դրվում է հոգնակի ստորոգյալ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. իմանալ ենթակայի և ստորոգյալի համաձայնության առանձին դեպքեր,

2. գործածել դիմային գերադասություն ունեցող ստորոգյալը, երբ բազմակի ենթակաները տարբեր դեմքով են,

3. հիշել բազմակի ենթակաների գործածությունը հոգնակի թվով ստորոգյալի հետ:

Թեմատիկ պլանավորում

**Դաս 28-Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Շարադասությունը նախադասության անդամների դասավորությու՞նն է, թե նախադասության անդամների ճիշտ ընտրությու՞նը.



դասավորություն ☐ ընտրություն ☐

2. Ուղիղ շարադասությամբ ենթական պետք է ստորոգյալից առաջ լինի՞, թե՞ հետո:

առաջ ☐ հետո ☐

3. Եթե ենթական ստորոգյալից առաջ է, այդ շարադասությունը ուղի՞ղ է, թե՞ շրջուն.

ա. ուղիղ ☐

բ. շրջուն ☐

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Շարադասությունը նախադասության անդամների դասավորությունն է:

2. Ուղիղ շարադասությամբ ենթական պետք է ստորոգյալից առաջ լինի է:

3.Եթե ենթական դրվում է ստորոգյալից հետո, շարադասությունը շրջուն է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տարբերակել նախադասության շարադասությունը,

2. առանձնացնել ուղիղ շարադասությունը,

3. հասկանալ շրջուն շարադասությունը:

[Թեմատիկ պլանավորում]

**Դաս28–Թեմայի ամփոփում**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ենթական և ստորոգյալը համաձայնում են **դեմքով**և **թվո՞վ**, թե՞ պայմանագրով ☺

/ընդգծել/



Տղան գնաց:

Տղաները գնացին:

Ես գրում եմ:

Դու գրում ես:

2. Բազմակի ենթակաների հետ դրվում է **եզակի՞**, թե՞ **հոգնակի** ստորոգյալ:

Արամը, Տիգրանը, Արթուրը գնա՞ց, թե՞ գնացին:

3. Ի՞նչ շարադասությամբ է գործածված հետևյալ նախադասությունը.

Գնալու ենք գրքասանքի ես, դու և Տիգրանը:

շրջուն

ուղիղ

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ենթական և ստորոգյալը համաձայնում են դեմքով և թվով:

2. Բազմակի ենթակաների հետ դրվում է հոգնակի ստորոգյալ:

3. Նախադասությունը գործածված է շրջուն շարադասությամբ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. խոսքի մեջ ճիշտ գործածել ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը դեմքով և թվով,

2. հիշել բազմակի ենթակաների հետ դրվող հոգնակիստորոգյալի գործածությունը,

3. տարբերակել ուղիղ և շրջուն շարադասությամբ նախադասությունները:

[Թեմատիկ պլանավորում]

**Դաս29.Գոյական անդամի լրացում՝ որոշիչ**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Գոյական ասելով ի՞նչ ենք հասկանում՝ ***առարկա***, թե՞ ***գործողություն***:

2. Տրված բառերից ո՞րն է գոյական **/ընդգծի՛ր/** :

   Ընտանիք, հիանալ, գեղեցիկ

3. Ո՞ր հատկանիշը կհամապատասխանի ընտանիք գոյականին.

   - համերաշխ
   - երկնագույն

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Առարկա ցույց տվող բառերը գոյականներ են:

2. Ընտանիք բառը գոյական է:

3. Ընտանիք գոյականին համապատասխանում է համերաշխ հատկանիշը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1.հիշել, որ առարկա ցույց տվող բառերը գոյականներ են,

2.հիշել և ընդգծել ճիշտ պատասխանը,

3. հիշել և նշել ընտանիք բառի հատկանիշը:

[Թեմատիկ պլանավորում]

**Դաս30. Որոշչի և որոշյալի շարադասությունը և կետադրությունը**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

**1.**Ի՞նչ է ցույց տալիս որոշիչը.

առարկայի հատկանիշ | առարկայի տեղ

2. Ի՞նչ հարցերի է պատասխանում որոշիչը /ընդգծ՛ր/.

Ինչպիսի՞, ի՞նչ անել, որքա՞ն, քանի՞, ո՞ր, ինչո՞ւ

3. Տրված բառակապակցությունների մեջ որո՞նք են որոշիչները.

Արևահամ(ինչպիսի՞) բառ, կապույտ(ինչպիսի՞) երկինք

4. Որոշիչը որոշյալից առա՞ջ է դրվում , թե՞ հետո.

ա/ առաջ　　　բ/ և՛ առաջ, և՛ հետո　　　գ/ հետո

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Որոշիչը ցույց տալիս առարկայի հատկանիշ:

2.Որոշիչը պատասխանում է ինչպիսի՞, ո՞ր , որքա՞ն , քանի՞ հարցերին:

3.**Արևահամ** և **կապույտ** բառերը որոշիչներ են:

4. Որոշիչը դրվում է որոշյալից և՛ առաջ, և՛ հետո :

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. հիշել կամ տեսնել հուշումը և նշել, որ որոշիչը ցույց տալիս առարկայի հատկանիշ,

2. հիշել, որ որոշիչը պատասխանում է ինչպիսի՞, ո՞ր, քանի՞, որքա՞ն հարցերին և ընդգծել,

3. հիշել կամ սլաքների օգնությամբ գտնել ու ընդգծել ***արևահամ, կապույտ*** հատկանիշները,

4. հիշել և նշել ճիշտ պատասխանը:

Թեմատիկ պլանավորում

**Դաս 31. Հատկացուցիչ**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Ո՞ր անդամի լրացումն է հատկացուցիչը.

**Գոյականական** թե՞ **բայական**

2. Ի՞նչ է ցույց տալիս հատկացուցիչը.

ա/ պատկանելություն բ/ գործողության ժամանակ

3. Ի՞նչ հարցերի է պատասխանում հատկացուցիչը /ընդգծի՛ր /.

Ու՞մ , ե՞րբ , ինչի՞, ինչերի՞, քանի՞

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1.Հատկացուցիչը գոյական անդամի լրացումն է:

2. Հատկացուցիչը ցույց է տալիս պատկանելություն, սերում, ծագում, վերաբերություն:

3. Հատկացուցիչը պատասխանում է ու՞մ, ինչի՞, ինչերի՞ հարցերին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1.հիշել և նշել ճիշտ պատասխանը.

2. հիշել և տրված տարբերակներից նշել ճիշտ պատասխանը.

3. մտապահել և ընդգծել հարցերը:

Թեմատիկ պլանավորում

**Դաս 32- Հատկացուցչի և հատկացյալի շարադասությունն ու կետադրությունը**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1.Ո՞ր կապակցության մեջ հատկացուցիչ կա.

ա/ **ոսկեզօծ աշուն** բ/ **Հայաստանի սահմանները**

2.Ի՞նչ բառակապակցություններ կկազմես՝ պատասխանելով հարցերին.

/ինչի՞/ **էջերը** , /ու՞մ/ **երկիրը**

---

3. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է հատկացուցիչ.

Սուրբ ***Մաշտոցի***գրերը զինվորներ են: ▢

Ես իմ ***անուշ*** Հայաստանի ***արևահամ***բառն եմ սիրում : ▢

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1.Հայաստանի սահմաններըկապակցության մեջ Հայաստանի բառը հատկացուցիչ է:

2.Հատկացուցիչի հարցերն օգտագործելով՝ կազմի բառակապակցություններ:

3. Ընդգծվածներից Մաշտոցի բառը հատկացուցիչ է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1.ընտրել և նշել ճիշտ տարբերակը,

2. պատասխանել տրված հարցերին և կազմել բառակապակցություններ,

3. հիշել, թե ի՞նչ հարցերի է պատասխանում հատկացուցիչը և նշել ճիշտ պատասխանը:

Թեմատիկ պլանավորում

**Դաս33- Բացահայտիչ, տեսակները, բուն բացահայտիչ**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

**1.** Ո՞ր անդամի լրացումն է բացահայտիչը.

**գոյական** թե՞ **բայական**

**2.** Կետադրական ո՞ր նշանով է բացահայտիչը տրոհվում բացահայտյալից.

ա/ բութով բ/ վերջակետով

**3.** Բացահայտիչը գտնվում է բութից առաջ, թե՞ հետո:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Բացահայտիչը գոյական անդամի լրացումն է:

2. Բացահայտիչը բացահայտյալից տրոհվում է բութով:

3. Բացահայտիչը դրվում է բութից հետո:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. հիշել և նշել ճիշտ պատասխանը,

2.մտապահել և նշել ճիշտ տարբերակը,

3.հիշել, որ բացահայտիչը միշտ գտնվում է բութից հետո:

Թեմատիկ պլանավորում

**Դաս34- Թեմայի ամփոփում**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1.Ո՞ր կապակցության մեջ որոշիչ կա.

ա/ արևի շողեր բ/ ոսկեզօծ շողեր

2. Նախադասության ի՞նչ անդամ է ընդգծված բառը տրված նախադասության մեջ.

Նոյի տապանը կանգ առավ Արարատի վրա:

ա/ բացահայտիչ բ/ հատկացուցիչ

3. Ամբողջացրու՛ նախադասությունը՝ տեղադրելով համապատասխան բացահայտիչը.

Մեր առջև երևաց բիբլիական լեռը՝ -----------------------------:

/Արարատը, Էվերեստ /

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Տրված կապակցության մեջ ոսկեզօծ–ը որոշիչն է:

2. Նախադասության մեջ Նոյի բառը հատկացուցիչ է:

3. Բացահայտիչը գտնվում է բացահայտյալից հետո, իսկ տրված նախադասության համապատասխան բացահայտիչը **Արարատը** բառն է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1.մտապահել և նշել ճիշտ տարբերակը,

2. հիշել, որ հատկացուցիչը դրվում է սեռական հոլովով և ցույց է տալիս պատկանելություն,

3. հիշել, որ բացահայտիչը գտնվում է բացահայտյալից հետո և տեղադրել համապատասխան բառը /բացահայտիչը/ :

[Թեմատիկ պլանավորում]

**Դաս 35 -Խնդիրներ և պարագաներ**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

- Ի՞նչ է ցույց տալիս բայը:
- Ի՞նչ ենք հասկանում գործողություն ասելով:
- Որ անդամի լրացումներն են խնդիրներն ու պարագաները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1.Պետք է իմանա՝ որ գործողություն ցույց տվող բառերը կոչվում են բայ:
2.Պետք է իմանա, որ գործողություն ասելով հասկանում են առարկայի մի բան անելը:
3.Պետք է իմանա, որ խնդիրներն ու պարագաները բայական անդամի լրացումներն են:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա .**

1.Պետք է կարողանա բայի օրինակ բերել:
2.Պետք է կարողանա առարկան տարբերել գործողությունից:
3. Պետք է կարողանա հիշել և առանձնացնել բայական անդամի լրացումները:

**Դաս 36 – Ուղիղ խնդիր** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Նախադասության ո՞ր անդամն է կատարում գործողություն:
2. Ո՞ր հոլովով է դրվում ենթական:
3. Նախադասության ո՞ր առարկան է իր վրա կրում ենթակայի գործողությունը:
4. Ո՞ր հոլովով է դրվում ուղիղ խնդիրը:
5. Ո՞ր հարցերին է պատասխանում ուղիղ խնդիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Պետք է իմանա, որ գործողություն կատարում է ենթական:
2. Պետք է իմանա, որ ենթական միշտ դրվում է ուղղական հոլովով:
3. Պետք է իմանա, որ այն առարկան, որն իր վրա կրում է ենթակայի գործողությունը, կոչվում է ուղիղ խնդիր:
4. Պետք է իմանա, որ ուղիղ խնդիրը դրվում է հայցական հոլովով:
5. Պետք է իմանա, որ ուղիղ խնդիրը պատասխանում է ու՞մ, ի՞նչ հարցերին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա գտնել նախադասության ենթական:
2. Պետք է կարողանա գտնել տրված նախադասության ենթական և նշել հոլովը:
3. Տրված նախադասության մեջ նշել գործողություն կատարող առարկան և գործողությունն իր վրա կրող առարկան, ինչպես նաև նշել այդ առարկաների պաշտոնները:
4. Տարբերակել հայցական հոլովը ուղղականից:
5. Տարբերակել ուղիղ խնդիրը ենթակայից:

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 37- Ներգործող խնդիր

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1.Ի՞նչ է նշանակում ներգործել:

2.Ո՞ր անդամին է լրացնում նորգորործող անուղղակի խնդիրը:

3.Ո՞ր հարցերին է պատասխանում ներգործող անուղղակի խնդիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Պետք է իմանա, որ ներգործել նշանակում է ազդել, ներգործություն ունենալ:
2. Պետք է իմանա, որ ներգործող անուղղակի խնդիրը բայական անդամի լրացում է:
3. Պետք է իմանա, որ ներգործող անուղղակի խնդիրը պատասխանում է ու՞մից, ինչի՞ց, ո՞ւմ կողմից հարցերին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա նախադասություն կազմել ներգործել բայով:
2. Պետք է կարողանա գտնել ներգործող անուղղակի խնդիրը:
3. Պետք է կարողանա ճիշտ հարց տալով որոշել, թե նախադասության մեջ ընդգծված առարկաներից որն է նորգործող անուղղակի խնդիրը:

[Թեմատիկ պլանավորում]

Դաս-38 Հանգման խնդիր

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1.Ի՞նչ է նշանակում հանգել բայը:

2.Ո՞ր անդամի լրացումն է հանգման անուղղակի խնդիրը:

3.Ո՞ր հարցին է պատասխանում հանգման անուղղակի խնդիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Պետք է իմանա, որ հանգել նշանակում է եզրակացնել, հասնել:
2. Պետք է իմանա, որ հանգման անուղղակի խնդիրը բայական անդամի լրացում է:
3. Պետք է իմանա, որ հանգման անուղղակի խնդիրը պատասխանում է ո՞ւմ, ինչի՞ն հարցերին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1.Պետք է կարողանա նախադասություն կազմել *հանգել* բայով:

2. Պետք է կարողանա ցույց տալ բայական անդամի լրացումները:

3. Պետք է կարողանա ճիշտ հարց տալով գտնել նախադասության հանգման խնդիրը:

Թեմատիկ պլանավորում

Դաս- 39 Միջոցի խնդիր

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար

1.Ո՞ր անդամի լրացումն է միջոցի անուղղակի խնդիրը:

2.Ո՞ր հարցին է պատասխանում միջացի անուղղակի խնդիրը:

3.Ո՞ր հոլովով է դրվում միջոցի անուղղակին խնդիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1.Պետք է իմանա, որ միջոցի անուղղակի խնդիրը բայական անդամի լրացում է:

2.Պետք է իմանա, որ միջոցի անուղղակի խնդիրը պատասխանում է ումո՞վ, ինչո՞վ հարցերին:

3.Պետք է իմանա, որ միջոցի անուղղակի խնդիրը դրվում է գործիական հոլովով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1.Պետք է կարողանա ճիշտ հարց տալով գտնի տրված նախադասության միջոցի անուղղակի խնդիրը:

2. Պետք է կարողանա տրված հարցերով գտնել միջոցի անուղղակի խնդիրը:

3. Պետք է կարողանա գտնել գործիական հոլովով դրված բառերը և որոշել վերջավորությունները:

Թեմատիկ պլանավորում

Դաս 40-Անջատման անուղղակի խնդիր

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար

1.Ո՞ր անդամի լրացումն է անջատման անուղղակի խնդիրը:

2.Ո՞ր հարցերին է պատասխանում անջատման անուղղակի խնդիրը:

3.Ո՞ր հոլովով է դրվում անջատման անջատման անուղղակի խնդիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Պետք է իմանա, որ անջատման անուղղակի խնդիրը բայական անդամի լրացում է:
2. Պետք է իմանա, որ անջատման անուղղակի խնդիրը պատասխանում է ումի՞ց, ինչի՞ց, ինչերի՞ց հարցերին:
3. Պետք է իմանա, որ անջատման անուղղակի խնդիրը դրվում է բացառական հոլովով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1.Պետք է կարողանա գտնել անջատման անուղղակի խնդիրը:

2. Պետք է կարողանա նույն հարցին պատասխանող խնդիրները տարբերել իրարից:

3. Պետք է կարողանա գտնել  նախադասության անջատման խնդիրը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 41- Միասնության խնդիր

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար

1.Ո՞ր անդամի լրացումն է միասնության անուղղակի խնդիրը։

2.Ո՞ր հարցերին է պատասխանում միասնության անուղղակի խնդիրը։

3.Ինչո՞վ է արտահայտվում միասնության անուղղակի խնդիրը։

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1.Պետք է իմանա, որ միասնության անուղղակի խնդիրը բայական անդամի լրացում է։

2.Պետք է իմանա, որ միասնության խնիդրը պատասխանում է ո՞մ հետ, ինչի՞ հետ, ինչերի՞ հետ հարցերին։

3.Պետք է իմանա, որ միասնության խնդիրը հիմնականում արտահայտվում եմ սեռական հոլովի և հետ կապի կապակցությամբ։

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա գտնել միասնության անուղղակի խնդիրը։

2. Պետք է կարողանա գտնել տրված հարցերին պատասխանող բառերը, որոշել՝ ինչ անդամ են։

3.Պետք է կարողանա ճիշտ հարց տալով գտնել սեռական հոլովով դրված բառերը։

Դաս 42- Վերաբերության անուղղակի խնդիր

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Ո՞ր անդամի լրացում է վերաբերության անուղղակի խնդիրը,
2.Ո՞ր հարցերին է պատասխանում վերաբերության անուղղակի խնդիրը,
3. Ի՞նչ կապերով է արտահայտվում վերաբերության անուղղակի խնդիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. որ վերաբերոթյան անուղղակի խնդիրը բայական անդամի լրացում է,
2. որ վերաբերության անուղղակի խնդիրը պատասխանում է ո՞ւմ մասին, ինչի՞ մասին, ո՞ւմ հանդեպ, ինչի՞ վերաբերյալ և նմանատիպ այլ հարցերի:
3.որ վերաբերության անուղղակի խնդիրը արտահայտվում է սեռական հոլովի և ***մասին, շուրջը, վերաբերմամբ կամ վերաբերյալ, նկատմամբ, առթիվ, հանդեպ*** կապերի կապակցությամբ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. գտնել խնդիրները:
2. ճիշտ հարց տալով գտնել տրված նախադասության վերաբերության անուղղակի խնդիրը:
3. գտնել կապերը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 43- Ամփոփում

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Ի՞նչ է նշանակում բայական անդամի լրացում:
2. Ի՞նչ խմբերի են բաժանվում բայական անդամի լրացումները:
3. Ի՞նչ են ցույց խնդիրները:
4. Ի՞նչ տեսակների են բաժանվում խնդիրները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Պետք է իմանա, որ բայական անդամի լրացում նշանակում է բայով արտահայտված անդամի լրացում:
2. Պետք է իմանա, որ բայական անդամի լրացումները բաժանվում են խնդիրների և պարագաների:
3. Խնդիրները ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկաներ:
4. Պետք է իմանա, որ խնդիրները բաժանվում են երկու խմբի՝ ուղիղ և անուղղակի:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա նշել նախադասության բայական անդամը:
2. Պետք է կարողանա որոշել, նախադասության մեջ բառը խնդիր է, թե պարագա:
3. Պետք է կարողանա նշել նախադասության բոլոր խնդիրները:
4. Պետք է կարողանա որոշել ամեն խնդրի տեսակը:

Դաս 44 – Պարագաներ. տեղի պարագա Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Նախադասության ո՞ր անդամի լրացում է պարագան. գոյականակա±ն, թե± բայական:

2. Բայական անդամի ո±ր հանգամանքն է նշում տեղի պարագան:

3. Ի՞նչ հարցերի է պատասխանում տեղի պարագան:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. որ պարագան բայական անդամի լրացում է,

2. որ տեղի պարագան ցույց է տալիս գործողության կատարման տեղը,

3. որ տեղի պարագան պատասխանում է ու՞ր, որտե՞ղ /ըստ անհրաժեշտության հոլովված տարբերակը ճանաչի/ հարցերին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. հիշել և ցիտել, որ պարագան բայական անդամի լրացում է,

2. մտապահել և սահմանել, որ տեղի պարագան ցույց է տալիս գործողության կատարման տեղը,

3. հիշել և նշել տեղի պարագային տրվող հարցերը:

Դաս 45 -Ժամանակի պարագա [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ի՞նչ է ցույց տալիս ժամանակի պարագան:

2. Ի՞նչ հարցերի է պատասխանում ժամանակի պարագան:

3. Նախադասության ո՞ր անդամին է լրացնում ժամանակի պարագան:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. որ ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը,

2. որ ժամանակի պարագան պատասխանում է ***ե՞րբ*** և ժամանակ մատնանշող այլ հարցերի,

3. որ ժամանակի պարագան բայական անդամի լրացում է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. նշել, որ ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը,

2. համապատասխան հարցով գտնել ժամանակի պարագան,

3. գտնել և առանձնացնել ժամանակի պարագան որպես բայական անդամի լրացում:

Դաս 46 - Ձևի պարագա [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչի՞ լրացում են ձևի պարագանները՝ բայի՞, թե՞ գոյականի:

2. Բայի որ հանգամանքն է ցույց տալիս ձևի պարագան:

3. Ի՞նչ հարցի են պատասխանում ձևի պարագանները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. որ ձևի պարագան բայի լրացում է,

2. որ ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը,

3. որ ձևի պարագան պատասխանում է **ինչպե՞ս** հարցին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. մտապահել ձևի պարագաները որպես բայի լրացում,

2. հիշել և նշել ձևի պարագայի իմաստային արտահայտությունը,

3. տարբերակել **ինչպես** -ը որպես ձևի պարագաներին տրվող հարց:

Դաս 47 - Պատճառի պարագա [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Գործողության ի՞նչն են ցույց տալիս պատճառի պարագաները:

2. Ի՞նչ հարցի են պատասխանում պառճառի պարագաները:

3. **Քո ...... դասից ուշացա :** Նախադասության մեջ ո՞ր կապի տեղադրումն է ճիշտ՝ շնորհի՞վ, թե՞ պատճառով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. որ պատճառի պարագան ցույց է տալիս գործողության կատարման պատճառը:

2. որ պատասխանում են **ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ինչի՞ց հարցին** հարցերին:

3. որ տրված նախադասության մեջ պետք է տեղադրվի **<u>պատճառով</u>** կապը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տարբերակել, որ պատճառի պարագանները ցույց են տալիս գործողության կատարման պատճառը,

2. տարբերակել **ինչու՞, ի՞նչ պատճառով, ինչի՞ց** հարցերը որպես պատճառի պարագաներին տրվող հարցեր,

3. խոսքի մեջ առանձնացնել ***շնորհիվ*** և ***պատճառով*** կապերի իմաստները:

Դաս 48 - Պայմանի  պարագա                                    Թեմատիկ պլանավորում

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Նախադասության ո՞ր անդամի լրացումն է պայմանի պարագան:

2. Ի՞նչ հարցերի են պատասխանում պայմանի պարագաները:

3. **Մեկնեցի վերադառնալու պայմանով** նախադասության մեջ ո՞րն է բայի լրացումը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. որ պայմանի պարագան բայի լրացում է,

2. որ պայմանի պարագաները պատասխանում են **ո՞ր դեպքում, ի՞նչ պայմանով** հարցերին,

3. որ տրված նախադասության մեջ բայի լրացումը **վերադառնալու պայմանով** կապակցությունն է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տրված պարզ նախադասության մեջ գտնել բայը և բայի լրացումը,

2. տրված  հարցերի միջոցով գտնել պայմանի պարագան,

3. տրված պարզ նախադասության մեջ ընդգծել  բայը և բայական անդամի լրացումը:

Դաս 49 -Նպատակի պարագա [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Նախադասության ո՞ր անդամի լրացումն է նպատակի պարագան:

2. Ի՞նչ հարցի են պատասխանում նպատակի պարագանները:

3. Ո՞ր բառը կարելի է տեղադրել գործողության նպատակ արտահայտելու համար:

**Այսօր մտա գրախանութ՝ գիրք գնելու / <u>նպատակով, պատճառով /</u>**

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. որ նպատակի պարագան բայի լրացում է,

2. որ նպատակի պարագան պատասխանում է **ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով** հարցերին,

3. որ տրված նախադասության մեջ պետք է տեղադրել **<u>նպատակով</u>** կապային բառը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տրված պարզ նախադասության մեջ գտնել բայը և բայի լրացումը:

2. տրված հարցերի միջոցով գտնել նպատակի պարագան:

3. տրված պարզ նախադասության մեջ տեղադրել համապատասխան բառը:

Դաս 50- Չափ ու քանակի պարագա [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Չափ ու քանակի պարագան բայակա՞ն, թե՞ գոյականական անդամի լրացում է:

2. Ի՞նչ հարցի է պատասխանում չափի պարագան՝ որպե՞ս, թե՞ ինչքան:

3. ***Քաղաքն ամբողջովին ծածկված էր մշուշով*** նախադասության մեջ ո՞ր բառն է չափ ցույց տալիս:

4. ***Քի՛չ խոսիր, շա՛տ լսիր*** նախադասության մեջ որո՞նք են չափի պարագաները:

5. Որպես չափի պարագա՝ ո՞ր բառը կտեղադրես տվյալ նախադասության մեջ (***բազմիցս, ինչքան, շատ***):

Վերջերս նա _________________ էր շփվում մեզ հետ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. որ չափ ու քանակի պարագան բայական անդամի լրացում է,

2. որ չափ ու քանակի պարագաները պատասխանում է ինչքա՞ն, որքա՞ն հարցերին,

3. որ ***Քաղաքն ամբողջովին ծածկված էր մշուշով :*** նախադասության մեջ ***ամբողջովին*** բառն է ցույց տալիս գործողության կատարման չափը,

4. որ ***Քի՛չ խոսիր, շա՛տ լսիր :*** նախադասության մեջ ***քիչ*** և ***շատ*** բառերը չափի պարագաներ են,

5. որ տվյալ նախադասության մեջ որպես չափի պարագա պետք է ընտրել ***շատ*** *բառը*:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. նշել, որ չափ ու քանակի պարագաները լրացնում են գործողություն ցույց տվող բառին՝ բային,

2. հիշել, որ յուրաքանչյուր պարագա ունի իր համապատասխան հարցը,

3. նախադասության մեջ գտնել չափ ու քանակ ցույց տվող բառերը,

4. հիշել և ճիշտ հարց տալ, գտնել պարագաները,

5. տրված բառերից գտնել և առանձնացնել համապատասխան բառը

Դաս 51 - Գործնական գրություններ: Բնութագիր [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞րն է գործնական գրության տեսակ. նկարագի՞րը, թե՞ բնութագիրը:

2. Ո՞ր դեպքում է մարդուն անհրաժեշտ բնութագիր. աշխատանքի ընդունվելի՞ս, թե՞ ազատվելիս:

3. Կարո՞ղ է մարդն իր համար գրել բնութագիր:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. որ բնութագիրը գործնական գրության տեսակ է,

2. որ բնութագիրն անհրաժեշտ է որևէ դպրոց, ուսումնական հաստատություն կամ աշխատանքի ընդունվելիս և տեղափոխվելիս,

3. որ բնութագիր կարող է գրել նա, ով ծանոթ է տվյալ անձի մարդկային և մասնագիտական որակներին և հմտություններին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տրված երկու տեքստերից առանձնացնել բնութագիրը,

2. նշել դեպքեր, երբ մարդուն անհրաժեշտ է բնութագիր,

3. իմանալ, թե ով կարող է գրել բնութագիր որևէ անձի համար:

Դաս 52 - Ինքնակենսագրություն [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար.**

1. Ո՞րն է գործնական գրության տեսակ՝ կենսագրությո՞ւնը, թե՞ ինքնակենսագրությունը:

2. Ո՞ր դեպքում է մարդուն անհրաժեշտ ինքնակենսագրություն՝ աշխատանքի ընդունվելի՞ս, թե՞ ազատվելիս:

3. Գործնական գրության ո՞ր տեսակն է մարդն ինքն իր մասին գրում՝ ինքնակենսագրությո՞ւն, թե՞ բնութագիր:

4. Ո՞ր տեղեկությունները պետք է պարտադիր տրվեն ինքնակենսագրության մեջ աշխատանքի ընդունվելիս:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. որ  ինքնակենսագրությունը գործնական գրության տեսակ է,

2. որ ինքնակենսագրությունն անհրաժեշտ է աշխատանքի ընդունվելիս և տեղափոխվելիս,

3. որ մարդ ինքն է իր մասին գրում ինքնակենսագրություն, իսկ նրա բնութագիրը տալիս է մեկ այլ անձ,

4. որ աշխատանքի ընդունվելիս ինքնակենսագրության մեջ պետք է պարտադիր նշվի աշխատանքային փորձը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տարբերակել ինքնակենսագրությունը այլ տեքստերից,

2. իմանալ այն դեպքերը, երբ մարդուն անհրաժեշտ է ինքնակենսագրություն,

3. նշել ինքնակենսագրության և բնութագրի տարբերությունը,

4.  նշել այն տեղեկությունը, որ պարտադիր է ինքնակենսագրություն գրելիս:

**Դաս 53 - Ստացական** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար.**

1. Ո՞րն է գործնական գրության տեսակ՝ ստացակա՞նը, թե նվիրակա՞նը։

2. Ո՞ր դեպքում է մարդը տալիս ստացական՝ ինչ-որ բան ստանալո՞ւ, թե՞ նվիրելու դեպքում։

3.Անձի ստորագրությունը պարտադի՞ր է ստացականում։

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. որ ստացականը գործնական գրության տեսակ է,

2. որ ստացականը տալիս են որևէ բան ստանալու դեպքում,

3. որ ստացականում ստորագրությունը պարտադիր է։

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. տրված երկու տեքստերից առանձնացնել ստացականը,

2. նշել այն դեպքը, երբ տալիս են ստացական,

3. մտապահել գործնական գրությունում ստորագրելու փաստը։